


Հ. ԲԱՐՍԵՂ ՎՐԴ. ՖԵՐՀԱԹԵԱՆ



Հասնելու իր քահանայական երազին: Երրորդը՝ Սրբուհի, կ'ամուսնանայ եւ, իբր երեք աղջիկներու մայր, նոյնպէս երիտասարդ տարիքին կուրծքի քաղցկեղով կը մահանայ:

Վենսան իր ծննդավայրին մէջ եւ ժամանակ մըն ալ Պոլիս նախնական կրթութիւնը ստանալէն վերջ 12 տարեկանին (3 Սեպտ. 1921) վեց ընկերներով կ'երթայ Վիեննա՝ որպէս Մխիթարեան դպրեմանքի աշակերտ: Այդ 7 պատանիներէն 6-ը կը դառնան յետոյ մխիթարեան վարդապետներ:

Արթուն պատանին իր մտաւոր կարողութեան հետ կը միացնէր նաեւ օրինակելի աշխատասիրութիւն մը: Իր դպրոցական ուսումը մեծ յաջողութեամբ աւարտելէն վերջ՝ 25 Փետրուար 1926, կը սկսի իր նորընծայութիւնը, որ վանական կեանքի փորձի շրջանն է, եւ կ'ընտրէ Բարսեղ անունը:

15 Օգոստոս 1927, կրօնաւորական ուխտադրութեամբ Եղբ. Բարսեղ կ'անդամակցի Մխիթարեան միաբանութեան եւ անմիջապէս կը սկսի իր հնգամեայ իմաստասիրական-աստուածաբանական ուսման:

16 Յուլիս 1932, մեծ յաջողութեամբ ուսումը աւարտած՝ Հ. Բարսեղ Ֆերհաթեան կը ձեռնադրուի կուսակրօն քահանայ եւ նոյն տարին իսկ, 12 Սեպտեմբեր 1932, կը ղրկուի Փլովտիւ (Պուլկարիա), զօրացնելու տեղւոյն Մխիթարեան վարժարանի անձնակազմը: Փլովտիւի Մխիթարեան վարժարանը, որ առաջին աշխարհամարտէն վերջ հիմնուած էր Հ. Սահակ Կոզեանի կողմէ, միշտ վայելած է տիպար դպրոցի մը համբաւը՝ մեծապէս

18 Դեկտեմբեր 1999, Լոս Անճելըսի մէջ, 90 տարեկանին, իր մահկանացուն կնքեց անբասիր եւ անձնուէր հոգեւորական, վաստակաւոր կրթական մշակ, գործով ու գրով դաստիարակ, վիեննական մխիթարեան միաբան Հ. Բարսեղ վրդ. Ֆերհաթեան:

Մկրտութեան անունով՝ Վենսան, ծնած էր 16 Հոկտեմբեր 1909, Պրոլսա (Թուրքիա)՝ իբր երկրորդ զաւակը Գարրիէլ եւ Վերգինէ ամուլին: Հայրը՝ Գարրիէլ, իր երիտասարդութեան ուզած էր արդէն նուիրուիլ հոգեւոր կոչումի, եւ միայն արտաքին պատճառներ արգելք եղած էին իր փափաքի իրականացման: Ուստի, իբր ընտանիքի հայր, իր նոյնքան կրօնասէր կնոջ հետ աղօթքի եւ հոգեւոր մթնոլորտի մէջ կը կրթեն իրենց զաւակները:

Ասոնցմէ անդրանիկը՝ Բենիամին, կ'անդամակցի Վենետիկի Մխիթարեան միաբանութեան, բայց 21 տարեկանին կուրդի քաղցկեղով կը մահանայ՝ առանց

զնահատուելով նաեւ երկրին կրթական նախարարութենէն: Լուրջ ուսում եւ նկարազրի կերտում, մարդկային բազմակողմանի կրթութիւն, օրինակելի կարգապահութիւն եւ միաժամանակ ընտանեկան ջերմ մթնոլորտ կը յատկանշէին Մխիթարեանը: Տարիներ վերջ ես ինքս հիացումով տեսած եմ նախկին սաներ, որոնք արդէն ընտանիքի հայրեր դարձած, կ'այցելէին Վիեննայի Մայր վանքը, ինչպէս զաւակի Մը սիրով ու յարգանքով կը մօտենային իրենց անձանօթ եւ նոյնիսկ իրենցմէ աւելի երիտասարդ մխիթարեան վարդապետներուն:

Երկրորդ աշխարհամարտին, երբ համայնավարները տիրեցին Պուլկարիայի, դժբախտաբար ազգայնացուցին նաեւ Մխիթարեան այդ սքանչելի վարժարանը:

Ֆերհաթեան, երբ Փլովտիւ կ'անցնի, Մխիթարեան վարժարանը ունէր 260 աշակերտ եւ տնօրէնն էր Հ. Համազասպ Ոսկեան: Վարդապետները ամբողջութեամբ նուիրուած էին դպրոցին: Իւրաքանչիւր վարդապետ ունէր շաբաթական 30 պահ դաս, դադարներուն եւ կէսօրէ վերջ սերտողութիւններուն հսկողութիւն, տետրակներու սրբազրութիւն եւն.: Հ. Ֆերհաթեան առաջին օրէն երիտասարդի եռանդով կը նուիրուի կրթական այդ գործին: Միաժամանակ կ'աշխատակցի «Ուսումնարան» ամսագրին, որ կը հրատարակուէր դպրոցի կողմէ, ուսուցիչներուն եւ աշակերտներուն մասնակցութեամբ:

Կիրակի եւ տօնական օրերուն ժողովուրդին համար պատարագ կը մատուցուէր դպրոցի մատուռին մէջ: Երիտասարդ վարդապետը, ինչպէս կը պատմէ յետոյ իր յուշերուն մէջ, շատ մեծ խնամքով եւ երկարատեւ վարձերով կը պատրաստէ եւ կը խօսի իր առաջին քարոզը, որ յետոյ կը դառնայ յաճախակի:

Հ. Ֆերհաթեան Փլովտիւի մէջ կը գործէ մինչեւ Դեկտեմբեր 1938, երբ Վիեննայէն հրահանգ կը ստանայ փոխադրուիլ Պէյրութ, ստանձնելու համար տեղւոյն Մխիթարեան վարժարանի տնօրէնութիւնը, որովհետեւ տնօրէնը՝ Փիլիպոս Մալճեան, կաթուածի մը հետեւանքով անկարող էր պաշտօնը շարունակել:

Պէյրութի Մխիթարեան վարժարանը համեմատաբար աւելի նոր էր՝ հիմնուած 1932-ին, վարձու շէնքի մը մէջ՝ քաղաքի կենտրոնը, որ յետոյ, 1955-ին, կ'ուսնայ իր սեփական նորակառոյց շէնքը Հազմիէ արուարձանին մէջ:

Ֆերհաթեան Պէյրութ կը հասնի 21 Յունուար 1939: Արդէն փորձառու դպրոցական կեանքին եւ գիտակից վարժարանին համար գլխաւոր պատասխանատուի իր պաշտօնին՝ ան իր ամբողջ կորովով կը փարի այդ գործին: Աչքին առջեւ ունէր Փլովտիւի դպրոցին օրինակը: Խստապահանջ էր կարգապահութեան, կանոնաւորութեան, ճշդապահութեան տեսակէտէ, բայց նախ եւ ամէնէն աւելի՝ ինքնիրեն հանդէպ:

Այդ տարիներուն վարժարանի երգի ուսուցիչն էր ծանօթ երգահան Համբարձում Պերպերեան, որ աշակերտական երգչախումբերով որակաւոր համերգներ կը կազմակերպէր եւ պատիւ կը բերէր վարժարանին:

Կարճ ժամանակի մէջ աշակերտութեան թիւը կ'աճի: Բարձր էր դպրոցի վարկը: Տարիներ վերջ, երբ Պէյրութ նախկին սաներու հանդիպելու առիթն ունեցայ, միայն գովասանք կը լսէի անոնցմէ իրենց սիրելի վարժարանին եւ անոր տնօրէնի մասին:

Հ. Ֆերհաթեան, հակառակ որ ամբողջովին կլանուած էր դպրոցի գործին:

րով, ժամանակ կը գտնէր նաեւ գրական աշխատանքի:

Այդ շրջանին Հայ կաթողիկէ Պատրիարքարանը կը սկսի հրատարակել «Մասիս» շաբաթաթերթը: Հ. Բարսեղ առաջին օրէն մաս կը կազմէ խմբագրական կազմին եւ կ'ըլլայ թերթի գլխաւոր աշխատակիցներէն:

1947-ին Հ. Յերհաթեան նոր գործի մը կը կոչուի: Երկրորդ աշխարհամարտին փակուած էր Վիեննայի Մխիթարեան դպրեմանքը: Հարկ էր ոչինչէն սկսիլ՝ նոր սերունդ հասցնելու համար Միաբանութեան: Հ. Փիլիպոս Մալճեան, հակառակ իր տարիքին եւ հիւանդութեան, սկսած էր Հարիսա գիւղին մէջ հաւաքել պատանի կոչումներ՝ յոյն կաթողիկէ վանքի մը կապուած: Սակայն արդիւնքը չէր կրնար գոհացնել. անհրաժեշտ էր առանձին փոքր դպրեմանք մը՝ աւելի կազմակերպուած եւ աւելի երիտասարդ անձնակազմով: Դպրոցի տնօրէնութիւնը կը յանձնուի Հ. Համազասպ Ոսկեանի, որ նոյն պաշտօնը վարած էր արդէն երկար ժամանակ Փլովտիւ, եւ դպրեմանքի պատասխանատուութիւնը կը ստանձնէ Հ. Բարսեղ Յերհաթեան: Կը վարձուի շէնք մը Աշխուժ գիւղը՝ հազար մեթր բարձրութեան վրայ, եւ հոն կը փոխադրուին պատանիները: Վարդապետը իրեն յատուկ եռանդով գործի կը ձեռնարկէ, կը կազմէ ուսումնական եւ հոգեւոր կրթութեան ծրագիրը, կը հաւաքէ նոր կոչումներ: Վիեննայէն երիտասարդ նոր վարդապետ մը՝ Հ. Կղեմէս Մօրիկեան, իրեն օգնական կը տրուի, եւ երկուքը միասին ամբողջովին կը նուիրուին այդ գործին:

Հ. Յերհաթեան միաժամանակ աշխոյժ գրական աշխատանք կը տանի՝ սուրբերու կենսագրականներ պատրաստելով, որպէսզի անոնք օրինակ ծառայեն պատանի ժողովուրդներուն: 1949-ին

դպրեմանքը կը փոխադրուի Պապատաթ գիւղը, որ աւելի մեղմ կլիմայ ունէր եւ աւելի մօտ էր Պէյրութի: Երկու վարդապետներու աշխատանքը իր շօշափելի արդիւնքը կու տայ, երբ 1950-ի ամառը 18 ընտրուած պատանիներու խումբ մը ղրկեն Վիեննա՝ նոր կեանք եւ խանդավառութիւն ստեղծելով Մայր վանքի ամայացած դպրեմանքին մէջ:

Տարի մը վերջ, 1951-ին, Յերհաթեան կը կանչուի Վիեննա՝ ստանձնելու նոյն դպրեմանքի տնօրէնութիւնը: Հոգեւորականի մը համար մեծագոյն առաքելութիւնն է երիտասարդներ առաջնորդել Աստուծոյ խորանին, հոգեւորականներու նոր սերունդ պատրաստել: Այդ գիտակցութեամբ Հ. Յերհաթեան կը նուիրուի իր նոր պաշտօնին Վիեննայի մէջ, որ սակայն կարճ կը տեւէ:

1954-ի գարնան արդէն կը ղրկուի Գահիրէ՝ տեղւոյն Մխիթարեան վարժարանի հարցերով, եւ նոյն ամառը իրեն կը յանձնուի նոյն վարժարանի տնօրէնութիւնը: Նախորդ տնօրէնը՝ Հ. Գարեգին Գարանֆիլեան՝ աննման նուիրումով ուսուցիչ, բայց արդէն տարիքը առած եւ ուժասպառ էր եւ քանի մը ամիս վերջն ալ կը մահանայ: Գահիրէի դպրոցը դժուար կացութեան մէջ էր: Աշակերտութեան թիւը՝ նախապէս 160, իջած էր 50-ի: Պատճառը միայն անյարմար միջավայրն էր. սեփական գեղեցիկ շէնք մը, բայց կորսուած նեղ փողոցներու մէջ: Վերջին տարիներուն հայ լաւագոյն ընտանիքները հեռացած էին այդ շրջանէն:

Նոր տնօրէնը տարի մը վերջ արդէն դպրոցը կը փոխադրէ Հելիոպոլիս՝ վարձու շէնքի մը մէջ, եւ միաժամանակ կը ծրագրէ սեփական շէնքի մը կառուցումը: Այդ նպատակով Տիկնանց Միութիւն կը հաստատէ, բարերարներ կը գտնէ, Միաբանութիւնն ալ կ'օգնէ եւ երազը կ'իրա-

կանանայ: Հելիոպոլիսի մէջ բոլոր յարմարութիւններով արդիական գեղեցիկ շէնք մը կը կառուցուի, որուն հանդիսական բացումը կը կատարէ Միաբանութեան արքայազմը՝ Հ. Մեսրոպ Արքեպ. Հապոգեան, 28 Մայիս 1960:

Աշակերտութեան թիւը անմիջապէս կը բարձրանայ, բայց, դժբախտաբար, դպրոցը երկար կեանք չ'ունենար: Երկրի քաղաքականութեան յանկարծական փոփոխութիւնը ծանր հարուած կը հասցնէ Եգիպտոսի հայ ընտիր գաղութին, որ մեծ մասով կը լքէ երկիրը եւ կը հեռանայ: Աշակերտութեան պակասէն քանի մը դպրոցներ կը ստիպուին դուրս փակել. նոյնպէս Մխիթարեանը՝ 1964-ին: Դպրոցի շէնքը վարձու կը տրուի Հոլլանտական ընկերութեան մը՝ ազատելու համար պետական գրաւումէ:

Յերհաթեան Գահիրէի մէջ 4 տարի հրատարակած է «Ուսումնարան» տարեգիրքը: Միաժամանակ հաւաքած է հայ նկարիչներու գործեր եւ, մանաւանդ, կազմած է Քեթիա Միայի յախճապակիներու արժէքաւոր հաւաքածոյ մը ի նպաստ Վիեննայի Մխիթարեան թանգարանին:

1968-ին Հ. Բարսեղ Յերհաթեան երկրորդ անգամ կը ղրկուի Լիբանան՝ որպէս վանատան Մեծաւոր: Դպրոցին մէջ կրօն կը դասաւանդէ, եկեղեցին կը քարոզէ եւ մանաւանդ՝ մեծ եռանդով նոր տարեգիրք մը կը հրատարակէ՝ «Վերելք»ը՝ կրօնաբարոյական բովանդակութեամբ, որմէ լոյս կը տեսնէ 6 հատոր:

1971-ի Միաբանութեան Ընդհ. ժողովին Հ. Բարսեղ Յերհաթեան կ'ընտրուի Ընդհ. վարչութեան անդամ, ուստի պէտք է մնար Վիեննա: Բայց երբ կը պատրաստուէր փոխադրուիլ Մայր վանք, Պէյրութի մէջ ինքնաշարժի արկած մը կ'ունե-

նայ եւ միայն 1974-ին կը վերադառնայ Վիեննա:

1977-78 նորէն տարի մը կը մնայ Պէյրութ՝ դպրոցին եւ փոքր դպրեմանքին օգնելու նպատակով, յետոյ կը վերադառնայ Վիեննա:

Հ. Յերհաթեանի վերջին առաքելավայրը կ'ըլլայ Լոս Անճելըս, ուր կը հասնի 5 Նոյեմբեր 1980, իբրեւ օգնական Հ. Միքայէլ վրդ. Աքեանի, որ տեղւոյն հայ կաթողիկէ համայնքին հոգեւոր հովիւն էր եւ տարի մը առաջ Հոլիվուտի մէջ հիմնած էր Մխիթարեան առաջին վարժարանը: Հակառակ իր տարիքին, Հ. Յերհաթեան հոս ալ աշխոյժ գործունէութիւն ցոյց կու տայ: Իր զբաղումը գլխաւորաբար հովուական եւ գրական առաքելութիւնն էր: Պէյրութի «Վերելք» տարեգիրքը այստեղ կ'ըլլայ նոյնանուն պարբերաթերթը, որմէ 70 թիւ կը հրատարակէ, վերջինը՝ մահէն ամիս մը առաջ, 90 տարեկանին:

Հ. Բարսեղ Յերհաթեան մտաւոր բացառիկ կարողութիւն մը չէր, բայց ունէր բացառիկ աշխատասիրութիւն եւ առաքելանման հոգի: Դպրոցին մէջ ուսումնէն աւելի ան կը ջանար տալ մարդկային, կրօնական եւ բարոյական կրթութիւն: Իր գրութիւններուն ալ նպատակն էր հայ ընտանիքներուն մէջ բերել կրօնական ու բարոյական շունչ, ստեղծել մարդկային մաքուր ու առողջ մթնոլորտ: Հ. Յերհաթեանի հանրային գործունէութեան 70 տարիներու անխոնջ նուիրումը եւ վաստակը, իբրեւ կրթական մշակ, դաստիարակ, գրող ու մխիթարեան վարդապետ, անգնահատելի է:

ԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԸ

Յիշեցիւք արդէն Գահիրէ հրատարակած «Ուսումնարան» տարեգիրքը (4 տարի), Պէյրութի «Վերելք» տարեգիրքը (6

տարի) եւ Լոս Անճելըսի «Վերելք» պարբերաթերթը (70 թիւ): Այդ հատորներու ընդանդակութեան կէսէն աւելին Հ. Յեր-հաթեանի յօդուածները կը գրուեն:


Ասկէ զատ առանձին հատորով հրատարակուած են՝

- 1) Փոքրիկ Գոհորոն, սուրբ տղու մը կեանքը, Պլովտիւ 1933:
- 2) Դժոխքի Ուխտատըրը, (Հ. Դամիանոս, Բորտոներու առաքեալը), Պէյրութ 1948:
- 3) Երկնքի ասպետը (Տոն Պոսթօ, լքուած պատանիներու առաքեալ եւ Սալիզեան միաբանութեան հիմնադիր), Պէյրութ, 1949:
- 4) Մխիթար Մեծ Սեբաստացի, Պէյրութ, 1949: Նոյնը կրկին աշխատուած՝ Մխիթար՝ Մարդը, Հայը, Սուրբը, Վիեննա, 1976:
- 5) Կարդիալ Աղաճաճեան, Կաթողիկոս-Պատրիարք, Պէյրութ:
- 6) Ո՛չ, Մարիա Կորեթթի, Պէյրութ, 1951:
- 7) Սրտի ճիւղ մը (Ի հանգիստ Հովսէփ Ամպարեանի), Պէյրութ, 1952:
- 8) Գարնան պէս սիրուն (պատմուածքներ), Պէյրութ, 1953:

- 9) Սրտերը վեր (պատմուածքներ), Պէյրութ, 1954:
- 10) Քրիստոնէական վարդապետութիւն (Կրօնի դասագիրք), Վիեննա, 1954:
- 11) Կեանք մը՝ մոլորուած Աստուծոյ եւ Ազգի (Գերապ. Հ. Մեսրոպ արքեպ. Հապոզեանի յօդուածներն առիթով), Վիեննա, 1961:
- 12) Գերապայծառը (Դամբանական Գերապ. Հ. Սահակ Եպս. Կոզեանի մահուան առիթով), Պէյրութ, 1963:
- 13) Մանուկի Գրիստոնէականը, Պէյրութ, 1968:
- 14) Իմ Ս. Գիրքս, Պէյրութ, 1968:
- 15) Կանանչ է այս ճամբան («Քրիստոսի երիտասարտութիւնը» գերմաներէն գրքէն ազատ թարգմանութիւն), Պէյրութ, 1970:
- 16) Թոնք Դեպի Յախտեմականը, Պէյրութ, 1983: Մխիթար Մատեն., թիւ 4:
- 17) Կեանքը Երկուքով, Լոս Անճելըս, 1983:
- 18) Մէկը միւսէն գեղեցիկ (պատմուածքներ), Լոս Անճելըս 1983:

Հ. Պօղոս Գոճանեան

ԱՐԻՍՏԱԿԷՍ ՎՐԴ. ՊՈՀՃԱԼԵԱՆ



Երկու ամսուան ընթացքին Վիեննական Մխիթարեան միաբանութիւնը սգաց իր երկրորդ կորուստը:

Բարսեղ վրդ. Յերհաթեանէ յետոյ Արիստակէս Վրդ. Պոհճալեան, նոյնպէս անբասիր, անձնագորհ Հոգեւորական, երկար տարիներու կրթական մշակ, տաղանդաւոր արուեստագէտ, գիտնական, գրող ու դաստիարակ, 14 Փետրուար 2000 Պոլիս, Ս. Յակոբ հիւանդանոցի մէջ, կարճատեւ, բայց տառապալից հիւանդութենէ վերջ անվերադարձ բաժնուեցաւ մեզմէ:

Մկրտութեան անունով՝ Պերճ, ծնած էր Պոլիս-Իւսկիւտար, 28 Յունուար 1917: Նախնիները գաղթած են Կեսարիայէն: Ազգային Ս. Փրկիչ հիւանդանոցի բարերար՝ Աւագ Սարկաւազ Կարապետ էֆենտի եւ պուլկարահայ Եղիսաբեթ ալքուիլի եօթ զաւակներուն անդրանիկն էր ան: Նախակրթարանը սկսած է Իւսկիւտարի Պերպերեան վարժարանը, յետոյ ուսումը շարունակած՝ Ս. Խաչ ճեմարան եւ Մխի-

թարեան վարժարաններու մէջ: 1933-ին կ'երթայ Վիեննա իբր Մխիթարեան դպրեվանքի աշակերտ, ուր դպրոցական ընթացքը ամբողջացնելէն վերջ՝ իմաստասիրական-աստուածաբանական իր ուսումը կը կատարէ Վիեննայի պետական համալսարանի մէջ, որմէ յետոյ կը վկայուի նաեւ քաղաքին մանկավարժական հաստատութենէն: 8 Մարտ 1936-ին, կրօնաւորական երեք ուխտերով կ'անդամակցի Մխիթարեան միաբանութեան եւ 11 Փետրուար 1940-ին կը ստանայ քահանայական Ս. Օծումը:

Իր հանրային գործունէութիւնը կը սկսի 1942-ին Պոլիս՝ Մխիթարեան վարժարանին մէջ: Բայց 1944-ին կը ստիպուի թրքական օրէնքով երեք տարի զինուորական ծառայութիւն կատարել:

1949-1951 կարճ ժամանակի համար կը պաշտօնավարէ Գահիրէի եւ Պէյրութի Մխիթարեան վարժարաններուն մէջ: 1951-ին կը վերադառնայ Պոլիս, ուր երկար տարիներով կը գործէ՝ իբր ուսուցիչ Մխիթարեան վարժարանի մէջ, եւ, 1988-էն սկսած, իբրեւ վանատան մեծաւոր մինչեւ իր մահը:

Հ. Պոհճալեան ունէր բազմատաղանդ արուեստագէտի նուրբ, զգայուն հոգի: Նաեւ շատ ընկերական էր եւ զուարթաբան: Ան իր երաժշտական տաղանդը յայտնեց 9 տարեկանին տուած իր առանձին համերգով: Դժբախտաբար հետագային չզարգացուց այդ կարողութիւնը: Պատճառը ծուլութիւնը չէր, այլ իր ծայրաստիճան համեստութիւնը: Հակառակ որ դասական երաժշտութեան եւ ամերիկեան հին ճազի սիրահար մըն էր, Պոհճալեան զբաղեցաւ միայն եկեղեցական երաժշտութեամբ եւ այդ մարզին մէջ ալ մնաց